Հանձնարար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1538-Ա/2 «11» նոյեմբերի 2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ «1183.ԱՊԱՀՈՎ ԴՊՐՈՑ» ԾՐԱԳՐԻ «11001.ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշման հավելվածի 34-րդ կետով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2020 պետական բյուջեի «1183.Ապահով դպրոց» ծրագրի «11001.Դպրոցների համալիր անվտանգության ապահովում» միջոցառման շրջանակում դրամաշնորհի հատկացման մրցույթի արդյունքները՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 30-ի N1326-Ա/2 հրամանով ստեղծված մրցույթի հանձնաժողովի կողմից ներկայացված 2020թ. նոյեմբերի 4-ի N3 արձանագրությանը համապատասխան (կցվում է):

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

11.11.2020

X

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378

«1183.ԱՊԱՀՈՎ ԴՊՐՈՑ» ԾՐԱԳՐԻ «11001.ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

2020 Թ. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

04 նոյեմբերի, 2020թ. **ք. Երևան**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 30.09.2020թ. N1326-Ա/2 հրամանով ստեղծված հաձնաժողովը նոյեմբերի 4-ին, ժամը 17.00-ին գումարել է հանձնաժողովի նիստ՝ ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N1937-Ն որոշման Հավելվածի 19-րդ կետի համաձայն ՀՀ պետական բյուջեի «1183.Ապահով դպրոց» ծրագրի «11001.Դպրոցների համալիր անվտանգության ապահովում» միջոցառման շրջանակում իրականացվելիք մրցույթին մասնակցության հայտ ներկայացրած կազմակերպությունների հայտերը գնահատելու նպատակով:

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Ժաննա Անդրեասյան

Անդամներ՝ Սուսաննա Ազատյան

Թամարա Գյոզալյան

Հովսեփ Գրիգորյան

Արսեն Բաղդասարյան

Քարտուղար՝ Ռոզա Հարությունյան

Բացակա՝ Սերգեյ Սահակյան

Տիգրան Թովմասյան

Օրակարգ

1.Մրցույթին հայտ ներկայացրած 13 կազմակերպությունների հայտերի ուսումնասիրություն և դրամաշնորհի հատկացման արդյունքների գնահատում:

Հանձնաժողովի անդամները ներկայացրեցին իրենց կողմից գնահատված գնահատման թերթիկները:

Հայտ ներկայացրած 13 կազմակերություններից Նոյեմբերյանի ավագ դպրոցի, Սալվարդի հիմնական դպրոցի, Ազատամուտի միջնակարգ դպրոցի և Մխչյանի Ք. Ալավերդյանի անվան միջնակարգ դպրոցի ներկայացրած հայտերը չբավարարեցին ներկայացված պահանջներին:

Հանձնաժողովի ներկա թվով հինգ անդամների գնահատման թերթիկների միջին գնահատականը ըստ դպրոցների կազմեց՝

- Գեղարքունիքի մարզի Արտանիշի միջնակարգ դպրոց - 124.2
- Սյունիքի մարզի Մուցքի հիմնական դպրոց - 130.4
- Տավուշի մարզի Այգեպարի միջնակարգ դպրոց - 126.2
- Տավուշի մարզի Մոսեսգեղի Պ. Ավալյանի անվան միջնակարգ դպրոց - 148.6
- Տավուշի մարզի Բերդավանի միջնակարգ դպրոց - 145.2
- Տավուշի մարզի Ոսկեպարի Հ. Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոց -135.8
- Տավուշի մարզի Ն. Ծաղկավանի միջնակարգ դպրոց - 121
- Տավուշի մարզի Վազաշենի միջնակարգ դպրոց - 147
- Տավուշի մարզի Սևքարի միջնակարգ դպրոց – 136.2
- ԿԳՄՄՆ Նոյեմբերյանի ավագ դպրոցը – 46.6
- Արարատի մարզի Մխչյանի Ք. Ալավերդյանի անվան միջնակարգ դպրոց - 76.6
- Սյունիքի մարզի Սալվարդի հիմնական դպրոց - 47.6,
- Տավուշի մարզի Ազատամուտի միջնակարգ դպրոց - 72.8

Մրցույթի արդյունքներն ամփոփել հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկների հիման վրա: Հանձնաժողովի քարտուղար Դ. Հարությունյանը խնդրեց կատարել հայտերի գնահատման քվեարկություն:

ՈՐՈՇԵՑԻՆ

5 կողմ, 0 դեմ ձայնով

ՀՀ պետական բյուջեի «1183.Ապահով դպրոց» ծրագրի «11001.Դպրոցների համալիր անվտանգության ապահովում» միջոցառման շրջանակում դրամաշնորհի հատկացման մրցույթում հաղթող ճանաչել հետևյալ կազմակերպություններին՝

1. Գեղարքունիքի մարզի Արտանիշի միջնակարգ դպրոց
2. Սյունիքի մարզի Մուցքի հիմնական դպրոց
3. Տավուշի մարզի Այգեպարի միջնակարգ դպրոց
4. Տավուշի մարզի Մոսեսգեղի Պ. Ավալյանի անվան միջնակարգ դպրոց
5. Տավուշի մարզի Բերդավանի միջնակարգ դպրոց
6. Տավուշի մարզի Ոսկեպարի Հ. Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոց
7. Տավուշի մարզի Ն. Ծաղկավանի միջնակարգ դպրոց
8. Տավուշի մարզի Վազաշենի միջնակարգ դպրոց
9. Տավուշի մարզի Սևքարի միջնակարգ դպրոց

Նախագահ՝ Ժ. Անդրեասյան

Անդամներ՝ Ս. Ազատյան

Թ. Գյոզալյան

Հ. Գրիգորյան

Ա. Բաղդասարյան

Քարտուղար՝ Ռ. Հարությունյան